16710

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՋՈՒԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ

ԲԱՐԵՓՈՐՁԱԿԱՆ ՄԻԱՒԹԵԱՆ

1925

ՆՈՐ-ՋՈՒՂԱ

Տպարան Ս. Ամենափրկչեան Վանաց

361
Ջ-36

2002

2010

361
Հ-36 Տոհս. Բ. Ելլեան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՋԱՒԱՑԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Հիմնուած 1926 թ. Ապրիլ 16-ին

ՍՈՒՐԲԱՑԱ ԳԱՂԱՖՈՒՄ

ՆՊԱՏԱԿ

1. Նպաստել ամեն բարենպատակ և ազգօգուտ Ընկերութիւնների և ձեռնարկների։

2. Օգնել թէ Ջաւայում, թէ Հայաստանում և թէ Զուղայում ամեն ազգային և եկեղեցական հաստատութիւնների, նամանաւանդ Ս. Էջմիածնի պայծառութեան համար՝ աշխատել տարեկան որոշ նպաստ ձեռք բերել և ուղարկել։

3. Նպաստել նաև Նոր-Զուղայում գտնուող Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան, թէ գրամով և թէ երբեմն ձեռագործի վերաբերեալ նիւթեր ուղարկելով։

ԸՆԵՐՈՒԻՆԵԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ընկերութեան նիւթական միջոցները

կազմում են՝

ա. Անդամուհիների ամսավճարները։

բ. Միանվագ նվերներ, գրամով կամ իրեղեններով։

գ. Գումարներ, որոնք գոյանում են Ընկերութեան օգտին տրվելիք հանդէսներից, ներկայացումներից, վիճակախաղից, իրեղենների և ձեռագործների վաճառումից։

դ. Բացառիկ դէպքում կատարվելիք հանդանակութիւններից։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

1. Ընկերութիւնը չի սահմանափակում իր անդամուհիների թիւը, որոնք լինում են պատուաւոր, սովորական և օժանդակ անդամուհիներ։

2. Ընկերութեանը անդամակցում են Զաւալից դուրս գտնվող հայուհիներ ևս։

3 Պատուաւոր համարվում են այն անդամները, որոնք մի զգալի ծառայութիւն են մատուցել Ընկերութեան, կամ այնպիսիները, որոնք 10 տարիների չափ անընդհատ կառավարել են Ընկերութեան վարչական գործերն ամենայն անձնուիրութեամբ, և կամ այնպիսիները, որոնք վճարում են տարեկան

ՀԱՅԿ. ... ՄՇԱԿՈՒՅԹ ... ՀԱՅ. ... ՄՇԱԿՈՒՅԹ
600
63395 հատ
2114-75

(~~լիրա~~) ռուբլի։

Մաեսր. Պատուաւոր անդամներ կարող են ընտրվել երկու սեռից ևս։

4. Պատուաւոր անդամ-անդամուհիներ ընտրվում և հաստատում է ընդհանուր ժողովը Վարչութեան առաջարկութեամբ։

5. Պատուաւոր անդամ-անդամուհիներին տրվում է Ընկերութիւնից պաշտօնապէս վաւերացրած վկայագիր։

6. Սովորական անդամուհիներ նրանք են համարվում, որոնք ամեն ամիս կանոնաւորապէս վճարում են իրանց ամսական վճարը 1 կամ $^1/_2$ գիլդը, համաձայն իրենց ստորագրութեան։

7 Օժանդակ անդամուհիներ համարվում են նրանք, որոնք անկարող են ամսավճարով անդամագրվել, և գործով են օգնում Ընկերութեան։

Մաեսր. Կանոնաւոր գործարան յաճախող օժանդակ անդամուհին միայն՝ ձայն կունենայ ընդհանուր ժողովում։

8. Ընդհանուր ժողովներում ամսավճարների քանակը փոփոխելի է։

9. Ընկերութեան գործերը վարում են սովորաբար Վարչութեան անդամները, կարևոր դէպքում հրաւիրում են Վարչութեան մէջ

վճռական ձայնով, իրենց կարող անդամուհիներից՝ գործին աջակցելու համար։

10. Ընկերութեան բոլոր անդամուհիների պարտականութիւնն է՝ զարկ տալ նրա գործունէութեանը, բազմացնելու նրա նիւթական միջոցները։

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

1. Վարչութիւնը կազմւում է Սուրբայու անդամուհիներից՝ ընդհանուր ժողովում ընտրւած հինգ անդամուհիներից և երկու փոխանդամուհիներից երկու տարի ժամանակով, գաղտնի քւէարկութեամբ. իսկ պաշտօնները բաժանւում են ընտրւած Վարչութեան անդամներից՝ փոխադարձ համաձայնութեամբ։

2. Վարչութիւնն իր միջից ընտրում է մի նախագահ, մի գանձապահ և մի քարտուղար։

3. Վարչութեան անդամակցութիւնից հեռացողի փոխարէն հրաւիրւում է ձայնից առաւելութիւն ստացած անձնափոխանորդը։

4. Վարչութեան նիստերի արձանագրութիւնը կազմում է քարտուղարը, որի մօտ է գտնւում Ընկերութեան վերաբերեալ բոլոր գործերը։

5. Վճիռները կայանում են ձայների բացարձակ մեծամասնութեամբ. իսկ ձայների հաւասարութեան դէպքում, գերակշռում է նախագահի կողմը։

6. Վարչութեան նիստերը վաւերական են համարւում, երբ ներկայ են անդամուհիներից ոչ պակաս քան 4 հոգի. իսկ երբ երեք ժողովներում յաջորդաբար անդամուհիների մեծամասնութիւնը չը ներկայացաւ, նախագահը ժողովի համաձայնութեամբ, պարտաւոր է հրաւիրել անձնափոխանորդներ։

Ծանօթ. Յաջորդաբար 3 անգամ բացակայող անդամուհին փոխարինւում է անձնափոխանորդով։

7. Վարչութեան նախագահը նշանակում է թէ վարչական և թէ ընդհանուր ժողովները։

8. Վարչութեան նախագահի պարտականութիւնն է հսկել, որպէս զի վարչական կազմը գործէ կանոնաւոր և ընդհանուր ժողովներում կայացած ժողովների համաձայն։

9. Վարչութեան կողմից որ և է բանակցութիւն այս կամ այն ընկերութեան և կամ անձնաւորութեան հետ՝ կրում է նախագահի և քարտուղարի, իսկ առ հարկին, բոլոր անդամուհիների ստորագրութիւնը։

10. Ընկերութեան կնիքը պահւում է նախագահի մօտ։

11. Գանձապահի պարտականութիւնն է հաւաքել անդամավճարներն ու նէբերներն և տալ իր և նախագահի ստորագրութեամբ և Ընկերութեան կնիքով վաւերացրած անդորրագիր և պահել հաշիւը։

Ծանօթ. Վարչութիւնն ունի իր հաշիւների ելմտից, ժողովների արձանագրութեան և նամակագրութեան մատեանները։

12. Գանձապահն իրաւունք ունի իր մօտ պահելու ոչ աւելի քան 50 գիլդր, իսկ մնացածը համաձայնութեամբ Վարչութեան՝ պէտք է ապահովացնել մի որ և է բանկում կամ առևտրական տնում։

Ծանօթ. Գանձապահը պարտաւոր է ամեն ամսավերջի հաշիւները փակել և ներկայացնել ժողովի քննութեան և վաւերացման։

13. Վարչութիւնն իրաւունք ունի պահել իւրաքանչիւր տարեայ մուտքի 20%-ը որպէս ռանձեռնմխելի դրամագլուխ, որի վրայ կաւելանայ և իր տոկոսը, իսկ մնացեալ 80%-ը գործածելու է։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

14. Ընդհանուր ժողովներ լինում են արտակարգ և տարեկան։

15. Արտակարգ ժողովները կայանում են ըստ պահանջման հարկի։

16. Հաշուետուութեան համար ժողով է կայանում ամեն տարի մայիսին, ուր քննւում են Ընկերութեան հաշիւները և գործունէութիւնն և հրահանգ-նախահաշիւ են տրւում ապագայ գործունէութեան համար։

17. Վարչութեան ժամանակամիջոցը լրանալիս նախապէս կարգաւորելով իր հաշիւները, հրաւիրում է ընդհանուր ժողով։

Ծանօթ. Ժամանակամիջոցը լրացած Վարչութեան անդամուհիներին կարելի է վերընտրել։

18. Ընդհանուր ժողովը կայացած է համարւում, երբ Սուրբայում գտնւող անդամուհիների կէսը ներկայ են. եթէ առաջին անգամ ժողովը չը կայացաւ, երկրորդ անգամւայ ընդհանուր ժողովը վաւերական է այնքան անդամուհիներով, որքան որ ներկայ կը լինեն։

19 Վարչութիւնն իր հաշիւները ժողովին ներկայացնելուց յետոյ, ընտրւում է մի Քննիչ Յանձնաժողով հաշիւները քննելու, որից յետոյ յաջորդ ժողովում կատարւում է նոր ընտրութիւն. իսկ մինչ այդ՝ նախորդ վարչութիւնը մնում է իր իրաւունքների մէջ։

20. Վարչութեան ընտրութեան մէջ ձայն ունին միայն այն անդամուհիները, (բացառութեամբ քէֆաուռ համարւած օժանդակ

անդամուհիների) որոնք իրենց ամսավճարը լրիւ վճարած կը լինին։

21. Ընդհանուր ժողովը կառավարելու համար ընտրւում է նոյն ժողովում մի նախագահ և որոշումներն արձանագրելու համար մի քարտուղար։

22. Ընդհանուր ժողովի մէջ բոլոր գործերը վճռւում են ձայների առաւելութեամբ, իսկ երբ հաւասար են, նախագահի ձայնն առաւելութիւն է տալիս. ընդհանուր ժողովի կողմից ընտրւած Ֆինիշ Յանձնախումբը քննում է տարեկան հաշիւները։

23. Ընկերութիւնն իր գոյութիւնը վերջացրած ժամանակ, պարտաւոր է իր բոլոր գոյքը և գրամն ուղարկել Նոր-Զուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան։

24. Կանոնագրութեան որևէ կէտը փոփոխել կարելի է միայն ընդհանուր ժողովի որոշմամբ։

Հաստատում եմ՝ բարեմաղթելով բեղմնաւոր գործունեութիւն։

1 Մայիսի 1925 թ. Սուրբայա-Զաւա

Ներկայացուցիչ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
Ամենայն Հայոց՝ Ռուբէն Ծ. Վարդապետ

Սիրելի Բարեկամ Երանելի
Գրիգորիսի և սրբազան
Հարազատի։ Ա. Թանասեան
Ռ. Հրտ։

ՀՍՍՌ-Արմ ССР
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0050321